ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

ՏՈՆՈՅԱՆ Ս. Հ.

Մարդկության պատմության մեջ XX դարը նշանավորվեց գիտության աննախադեպ զարգացումով: Սակայն նյութի տրոհման և քայքայման հետ մեկտեղ դարը բնորոշվեց նաև հազարամյակներով մշակված հոգևոր-բարոյական արժեհամակարգի փլուզումով: Աշխարհում, ուր ամեն ինչ տրված է, ու ոչինչ բացահայտված չէ, ուր չափազանց շատ են բռնությունը, ատելությունը, տառապանքը, ուր մարդու համար անհասկանալի են հոգևոր բարձրագույն ուժի ծրագրերը, գերիշխող դարձան Աստծո բարության, իրավացիության կամ արդարացիության ժխտումն ու կասկածը, անաստվածությունն ու մռայլ հոռետեսությունը, մարդկային մութ բնազդների գովերգումը և փակուղի տանող անհուսությունը: Իշխող դարձավ դեռ Նիցշեից եկող՝ բոլոր գերբնական մխիթարությունների և բարոյական արժեքների ժխտումը: Փորձ արվեց Աստծուն ճանաչել ըստ մեր բարոյականության և գեղեցկության կատեգորիաների: Քանի որ մարդու համար անիմանալի էին Աստծո ծրագրերը, անասելի հեռացավ դեպի աստվածային ճշմարտություն տանող ճանապարհը: Մարդկային օտարացման և անհուսության այս վիճակը այսպես է բնութագրել հանճարեղ փիլիսոփա-աստվածաբան Ն. Բերդյաևը. «Ամենասարսափելին այն է, երբ չկա ոչինչ մարդուց ավելի բարձր, չկա աստվածային խորհուրդ և աստվածային անսահմանություն: Մարդու կերպարը քայքայվում է, երբ նրա հոգում անհետանում է նախակերպը, երբ նրա հոգում չկա Աստված»[1]:

Այս ամենի համատեքստում աստվածային փորձի, Աստծո նկատմամբ վերաբերմունքի, բարու և չարի զգացողության ու ընկալման, մարդու լքվածության ու դատապարտվածության հարցերը փորձաքար եղան դարի բազմաթիվ մեծ մտավորականների, գրողների, արվեստագետների համար: Անաստվածության և մռայլ հոռետեսության պայմաններում քայքայումն ու քաոսը փառաբանող, հոգին ու միտքը պղտորող մշակույթին, գրականությանն ու արվեստին ի հակակշիռ՝ դեպի Աստված ու աստվածային մատույցները տանող, աշխարհն ու մարդուն փրկող գրականություն ու մշակույթ էր պետք: Վիլյամ Սարոյանը (1908-1981 թթ.) եղավ XX դ. այն մեծագույն գրողներից մեկը, որն իր ստեղծագործությամբ հաստատեց առաքինությունների, պարտքի և հոգևոր բարձր արժեքների էթիկան, ազատության և պատասխանատվության փոխհարաբերությունը: Սերն ու բարությունը, գեղեցկությունն ու ճշմարտությունը հռչակեց որպես մեր կյանքի ամենահաղթ ուժ և մարդու հետ խոսեց նորօրյա մարգարեի նման՝ նրան հասցնելով Աստծո խոսքը՝ որպես Ավետարան ու Կտակարան, յուրատեսակ հավատո հանգանակ, որում ամ

[1] **Бердяев Н.** *Диалектика божественного и человеческого, М., 2005, с. 86.*

փոփված են գրողի կրոնաբարոյական, հոգևոր-փիլիսոփայական, գեղագիտական և մարդագիտական հայացքները:

Իր ստեղծագործություններով Վիլյամ Սարոյանը խոսեց մարգարեի նման, որ բարձրացել է Լեռը, հանդիպել Աստծուն և մարդկանց է բերում Նրա խոսքը, բարության ու սիրո Ավետարանը՝ իրեն հատուկ բարոյական մաքսիմալիզմով ասելու, որ մարդը մենակ չէ իր տագնապների ու տառապանքների հետ, որ ցավերով լի այս կյանքում նրա հետ է Աստված, որը նրան չի լքել, և Նա է մարդու միակ ապավենը: Սարոյանն իր ամբողջ ստեղծագործությամբ մերժեց «Մարդկային կյանքը կեցություն է առանց հույսի» բանաձևումը: Նա սիրեց մարդուն Աստծո միջոցով: Ավելին, ինչպես Դավիթ Գասպարյանն է գրում. «Սարոյանը մի տեսակ Աստծո հայացքով էր նայում աշխարհին ու մարդկանց և այդ հայացքով էլ ստեղծում էր իր գեղարվեստական աշխարհը»[2]: Սարոյանն իր առջև խնդիր չի դնում Աստծուն տալ այն, ինչ Նրանը չէ, բայց, ինչպես Կամյուն է ասում՝ «Կա՞ այնպիսի բան, որ Աստծունը չլինի»[3]:

Հայ մարդու ճակատագիրը կրող, հայի հոգեկերտվածքով, աշխարհընկալումով ու փիլիսոփայական կենսազգացողությամբ, որի առանցքում Աստված է, խիղճն ու կարեկցանքը, նա հավատարիմ մնաց իր ժողովրդի հավաքական ոգու՝ դարերից եկող մարդակերտման ու մարդկային կատարելության համակարգին, Աստծուն մոտենալու, նրա հետ հաշտ ապրելու ձգտմանը՝ նույնիսկ մեզ բաժին ընկած արհավիրքներից, հայ ժողովրդին պատուհասած զարհուրելի աղետից ու Հայրենիքի կորստից հետո:

Սարոյանը, ինչպես ինքն է խոստովանել, զգացել է նաև ռուս հզոր՝ խղճի, բարության, սիրո, «փոքր մարդու» նկատմամբ կարեկցանքի գրականության ազդեցությունը. «Ամենից շատ սիրում եմ ռուս գրականությունը: Ռուս գրականությունն ունի այնպիսի մի որակ, որ կարող է մեծ հոգիներին գոհացնել՝ պարկեշտություն, անկեղծություն, անմիջականություն, թուլություն տկարի, սխալի և ձախողության հանդեպ, տկարություն ամոթխածության և խելագարության և վերջապես՝ մի խորունկ, շատ խորունկ սեր«[4]:

Իր բարոյափիլիսոփայական որոնումներով Վ. Սարոյանը փորձում էր գտնել արդարությունը և ճշմարտությունը, գեղեցկության և ներդաշնակության իդեալները, բարու և չարի արմատները, գտնել մարդու ազատության և երջանկության ճանապարհները՝ ոչ միայն խոր ապրումների՝ էքզիստենցիայի, այլև դատողությունների միջոցով: Գրողը դատապարտում է մարդու բարոյական անկումը, նրա կերպարի աղավաղումն ու խաթարումը, մարդկային կյանքի աններդաշնակությունը, բռնությունը, ատելությունը, կեղծիքն ու սուտը:

Սարոյանի ստեղծագործության վրա զգալի է մարդկության մեծագույն Գրքի՝ Աստվածաշնչի ազդեցությունը: Մեծ գրողին հասու

---

[2] **ԳասպարյանԴ.,** *Հայ գրականություն, Ե., 2000, էջ 217:*

[3] **Կաֆկա Ֆ.,** *Դատավարություն, Ե., 1991, էջ 220:*

[4] **Սարոյան Վ.,** *Ընտիր երկեր չորս հատորով, հ. 4, Ե., 1991, էջ 389: Այսուհետև Սարոյանի երկերից (հ. 1-3, Ե., 1986-1988) արվող մեջբերումների հատորն ու էջը կնշվեն բնագրին կից:*

էր այն բարձրագույն ճշմարտությունը, որ առանց Աստծո աշխարհը պատահական է և իմաստազուրկ: Նրա գործերը «Հայրիկ, դու խենթ ես» վիպակի հերոսի՝ գրողի նման ամեն օր Աստծուն ուղղված նամակներ են, որոնցում նա բարձրացնում է հավիտենական կարգախոսներ, արժեքներ ու ճշմարտություններ սիրո, ճշմարտության, բարու և չարի, գեղեցկության, ներդաշնակության, տառապանքի, բռնության և ատելության, կյանքի անցողիկության և ունայնության, մահվան, աշխարհի անկատարության մասին:

«Իմ բոլոր կերպարները ես ինքս եմ: Դա կարող է նկատվել սարսափելի սահմանափակություն, բայց ճշմարտություն է… Ես ենթակա եմ մի մեծ պարտքի, և իմ պարտքն է շատ գրելը: Ես լաց պիտի չլինեմ, ես պիտի չողբամ, չտրտնջամ մարդու սոսկալի կացության վրա, մարդկային հոգու անտանելի դժոխքի, մարդկային ճակատագրի բանտվածության վրա» (4,391): Վիլյամ Սարոյանի գեղարվեստական աշխարհը և նրա հերոսներին չես շփոթի ոչ մի, նույնիսկ հանճարեղ ու մեծ այլ գրողի աշխարհի ու հերոսների հետ: «Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպում, խոսելով Վիկտոր Տոսկայի ընտանիքի մասին, Վեսլին ասում է, որ նա լավ ընտանիքից է, պարզ ու հասարակ մարդկանցից, որոնք միշտ էլ մնում են մաքուր ու կարգին մարդիկ: Այդպիսի մաքուր ու կարգին մարդիկ են (Աստվածաշնչում նրանց մասին ասում են՝ «արդար») Սարոյանի բազմաթիվ հերոսներ՝ լքվածները, խոնարհները, կյանքից դուրս մնացածները, անարգվածները, սգավորները, նրանք, ովքեր այս կյանքում բոլորից շատ ունեն կարեկցանքի և մխիթարության կարիք: Սարոյանն այդ հրաշալի և օրինավոր մարդկանց մասին խոսելիս գործածում է հատկապես «մեծ» բառը, բնորոշում, որն ամփոփում է նրանց հոգեկան գեղեցկությունը, բարությունը, հանուն մերձավորի ինքնազոհաբերման ընդունակությունը:

Մեծ մարդ է «Մարդկային կատակերգության» Մաքոլիների ընտանիքի հայրը, որը հաջողակ չի եղել, հազիվ հացի փող է վաստակել, բայց հսկայական դժվարությամբ փող կուտակելով՝ կարողացել է իր կնոջ համար գնել ամենալավ տավիղը և կատարյալ դարձնել իր ընտանիքի երջանկությունը, քանի որ «տավիղի նվագը ապաքինում էր ամեն մի ցավ» (1,483): Ճիշտ այնպես, ինչպես իր աստվածային նվագով Սավուղի հիվանդությունն էր բուժում Դավիթ Սաղմոսերգուն, կամ դժոխքից Էվրիդիկային էր դուրս բերում Օրփեոսը:

Մեծ մարդ է միսիս Մաքոլին, որ, չնայած իր ընտանիքի աղքատությանը և կարիքին, կյանքի դաժան փորձություններին, իրեն համարում է երջանիկ մարդ: Նա նաև համոզված է, որ իր որդու համար մահ չկա, և կարողանում է սիրո, բարության, կարեկցանքի դասեր տալ իր զավակներին՝ մարդկային կյանքում ամենից շատ կարևորելով հավատը, համոզված, որ առանց հավատքի մարդը չի ապրի: Մեծ է Մաքոլիների ավագ որդին՝ Մարկուսը: Մեծ՝ իր ընտանիքին, հարազատներին, հայրենի քաղաքին՝ Իթաքային նվիրվածությամբ, անսահման սիրով: Մեծ, որովհետև ոչ մի հրամանի չի ուզում ենթարկվել, բացի խղճի հրամանից: Նա հավատում է իր անմահությանը և երջանիկ է, որ Մաքոլիների ընտանիքում, եթե մեկը

պիտի մասնակցի պատերազմին, հարկ եղած դեպքում նաև զոհվի, հենց ինքն է և ոչ իր եղբայրը: Մարկուսի պայքարը ոչ թե մարդու դեմ է, այլ նրա մեջ եղած գազանի:

Մեծ է Մաքոլիների մյուս որդին՝ Հոմերը, որը հավատում է բարու հաղթանակին, անձնվիրաբար սիրում է իր ընտանիքը, որին չեն կոտրում ստելով, խաբելով և ուրիշներին ճնշելով առաջ գնացող Բայֆիլդները: Նրա համար աշխարհում չկա ավելի կարևոր բան, քան արգելել Մահվան սուրհանդակի մուտքը Իթաքա: Նա սիրելի եղբոր մահից հետո էլ շարունակում է սիրել աշխարհն ու կյանքը և անծանոթ երիտասարդին ընդունել որպես իր եղբայր: Մեծ է Բեսը, որը նվագում է իր դաշնամուրը, տարածում գեղեցկության ու սիրո մեղեդին և սպասում իր սիրուն, որ գալիս է անծանոթ զինվորի՝ Թոբիի կերպարանքով, որի համար նույնպես Իթաքան խաղաղության, լույսի, ջերմության, հայրենի տան խորհրդանիշ է:

Մեծ մարդ է նույնիսկ Մաքոլիների կրտսեր որդին՝ չորսամյա Յուլիսիսը: Կյանքի ամենամղձավանջային պահերին անգամ փոքրիկ տղան հանգիստ է և ապահով, որովհետև ոչ միայն իր հարազատներն են պատվար և պաշտպանություն կյանքի փորձանքներից ու դժվարություններից, այլև բլուրներից իջած անծանոթ, մորուքով մարդը՝ Մեծ Քրիսը, որ գալիս է ջրերի վրայով և նրանից հեռացնում ամեն մի փորձանք ու չարիք, ազատում ամեն տեսակի թակարդներից: Մեծ մարդ է նպարավաճառ Արան, որ մարդկանց կոչ է անում ագահ չլինել, արդարացի լինել Աստծո հետ փոխհարաբերություններում և շնորհակալությամբ ընդունել այն, ինչ Աստված տալիս է և չուզել այն, ինչ Աստված չի տալիս հուսահատությունն ու թախիծը վանելու համար: Մեծ են նաև ծեր ուսուցչուհի միսս Հիքսը, որ հետևում է իր աշակերտների բարոյական ինքնակատարելագործմանն ու հոգեկան աճին, միստր Գրոգանը՝ այս աշխարհի մասին ամեն ինչ իմացող, իմաստուն ու բարի ծերունին:

«Մարդկային կատակերգություն» վիպակի «Ծառերն ու որթատունկերը» գլխում Ավետարանի և քրիստոնեական վարդապետության ներկայությունն ավելի քան ակնհայտ է: Այստեղ բացահայտ խոսվում է Քրիստոսի և նրա տասներկու առաքյալների՝ մարդկության կյանքում ունեցած բացառիկ դերի մասին: «Ես տեսել եմ կյանքի գետը, զուլալ, ինչպես բյուրեղ: Այս գետի երկու ափերին կանգնած էր կյանքի ծառը, որի վրա տասներկու տեսակ պտուղ էր աճում, և այդ ծառի տերևները բուժում էին մարդկանց ցավերը» (1,72): Այսպես է խոսում միստր Սփանգլերը՝ բարի ու կարեկից մի երիտասարդ, որն աշխարհի չապականված մարդկանցից մեկն է և աստվածային լույսը կրող: Իսկապես, Սարոյանի բազմաթիվ հերոսներ իրենց հոգևոր սնունդը ստանում են Որթատունկից՝ Աստծուց, ինչպես նրա մի ճյուղը: Այդ սնունդը, հյութն ու ավիշը Աստծո հետ նախաստեղծ կապն է, որ անքննելի է մարդկային մտքի համար, Սուրբ Հոգու հարատև ներկայությունը: «Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը: Ով բնակվում է իմ մեջ, և ես՝ նրա մեջ, նա շատ

պտուղ է տալիս, որովհետև առանց Ինձ ոչինչ անել չեք կարող…»[5]: Իսկ այդ պտուղներն են՝ «Սեր, խնդություն, խաղաղություն, համբերություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեզություն, ժուժկալություն» (Գաղատ., 5.22-23):

Սարոյանը նկատել է, որ իր ողջ ստեղծագործությունը երգ է, մի ինչ-որ տեսակի սոնետ: Սոնետ բարության, սիրո, գեղեցկության, մխիթարության և հույսի մասին: Նրա հերոսները սիրում են երգել աստվածաշնչյան սաղմոսները. «Քեզնից բացի, Տեր Աստված, չունեմ ուրիշ ապավեն, Քո թևերի հովանուն պիտի ապավինեմ: Թևերդ տեր, մեզ ապավեն» (1,457): «Վարվիր ուրիշների հետ այնպես, ինչպես կուզեիր, որ քեզ հետ վարվեն» աստվածաշնչյան այս դրույթով է ապրում, գիտակցաբար թե զգացաբար, Սարոյանի հերոսների մեծ մասը: Այս դրույթն է ընկած գրողի բարոյագիտական-հումանիստական մտածողության հիմքում, որը հասկանալի է դարձնում Սարոյանի պատկերացումը մարդու և նրա հոգեբարոյական կերտվածքի մասին: Սիրո և կարեկցանքի, բարության, չարությունից ու փոքրոգությունից վեր կանգնելու շնորհիվ, նրանք ինքնապաշտպանական մի բնազդով հաստատում են Հիսուսի ասածը. «Աստծո արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկ., 17.21):

Հավատի միջոցով՝ ներքին ազատության շնորհով են օժտված Սարոյանի բազմաթիվ հերոսներ: Նրանք ազատ են նյութական կամ անհրաժեշտության աշխարհին բնորոշ գետնաքարշ կրքերից, չարությունից, նախանձից, ընչաքաղցությունից, նյութապաշտությունից: Միսիս Մաքոլին համոզված է, որ իր տասնչորսամյա որդին՝ Հոմերը, կյանքում ոչ մի դրպե չի ունենա նենգ կամ փոքրոգի լինելու համար:

Սարոյանի ստեղծագործության մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի բարու թեման: Խոսելով երկնքի արքայության մասին՝ Հիսուսն ասում է. «Ինչի՞ նման է Աստծո արքայությունը, և ինչի՞ն նմանեցնեմ այն: Նման է մանանեխի հատիկին, որ մի մարդ վերցրեց և նետեց իր պարտեզը, սա աճեց և ծառ եղավ և երկնքի թռչուններն ապրում էին նրա վրա» (Ղուկ. 13.18-19): «Մարդկային կատակերգությունմ վիպակում միստր Գրոգանը կարծես շարունակում է մանանեխի հատիկի մասին Հիսուսի առակը. «Իսկ եթե մարդը բարի է, այդ բարությունը միայն իրենը չէ, այդ բարությունը նրանն է միայն այնքանով և նրա համար, որ պահպանի և տարածի ամենուրեք՝ թե՛ ինձ և թե՛ աշխարհում ապրող բոլոր մարդկանց համար» (1,460):

Բարու մասին Սարոյանի հերոսների մտորումները մեկ անգամ ևս հաստատում են, որ հասարակական և անձնական բարդ հակասություններն ու բախումները հաղթահարվում են միայն կատարյալ բարուն ձգտելու ճանապարհին: Իսկ կատարյալ բարին բարոյական օրենքներն են՝ Աստծո պատվիրանները, բարու, ճշմարտության, գե-

---

[5] *Աստուածաշունչ Մատեան Հին և Նոր կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2007, Հովհ., 15.5: Այսուհետև Սուրբ Գրքից մեջբերումների տվյալները կնշվեն բնագրին կից:*

ղեցիկի և սիրո վարդապետությունը: «Բարին երբեք չի մահանում, եթե մահանար, աշխարհում մարդիկ գոյություն չէին ունենա, ոչ մի տեղ կյանքը չէր լինի: Առանց խղճի ու կարեկցանքի մարդու հոգին անպտուղ է, ոչինչ չի կարող սնուցել» (1,450): «Միմյանց բեռը կրեցե՛ք և այդպիսով կատարեցե՛ք Քրիստոսի օրենքը: … Իսկ բարին գործելուց չձանձրանաք» (Գաղատ., 6.2,9),- գրում էր Պողոս առաքյալը:

Սարոյանի հերոսներն առանձնապես շատ են սիրում խոսել ճըշմարտության մասին: Նրանք լավ գիտեն, որ այս աշխարհում այն ավելի ու ավելի հաճախ է փոխարինվում շահով և կեղծ ճշմարտությամբ: Գնալով խորանում է անջրպետը մարդկային և աստվածային ճշմարտությունների միջև: Հոգևոր ճշմարտությունը հասու է միայն բարձր բարոյականության տեր մարդուն: «Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպում յոգ Օլսոնն ասում է, որ իրեն հետաքրքրում է ոչ թե փողը, այլ՝ ճշմարտությունը, ոչ թե հզորությունը, այլ՝ հավասարակշռությունը: Փողը և հարստությունը չեն հետաքրքրում նաև գրողին, որը խորհուրդ է տալիս Վեսլիին չտարվել փողով և բարձր կանգնել դրանից, քանի որ փողը շատ լավ մարդկանց է կործանել: «Ձեր կյանքի ժամերը» պիեսում Ջոն հաստատում է, որ փողը աշխարհի ամենամեղսալի բանն է, և դրանից գարշահոտ է փչում (2,112): Սարոյանի հերոսների մտորումները փողի մասին հիշեցնում են Հիսուսի առակը, որ մարդկանց համոզում էր հարստություն դիզել ոչ թե երկրի վրա, այլ երկնքում, որպեսզի ոչ ցեցը ուտի, ոչ էլ գողերը տանեն (Ղուկ., 12.33):

Վիլյամ Սարոյանի բարոյաէթիկական արժեհամակարգի բարձրակետը սերն է: Աստվածաբանների և բարոյաբանների կողմից հաստատված է այն ճշմարտությունը, որ երեք բացարձակ արժեքներ՝ բարին, ճշմարտությունը և գեղեցիկը կազմում են միասնություն, որի հիմքը սերն է: «Սիրիր մերձավորիդ, ինչպես կսիրեիր ինքդ քեզ»,- ասված է Ավետարանում: Սերն այն ուժն է, որ արմատախիլ է անում ցանկացած եսասիրություն և անաստվածություն: «…սիրեցե՛ք ձեր թշնամիներին և բարություն արեք ձեզ ատողներին ու փոխ տվեք նրան, ումից հետ առնելու ակնկալություն չունեք» (Ղուկ., 6.35): Քրիստոնեական սիրո մեծագույն բանաստեղծը՝ Պողոս առաքյալը, բանաստեղծականացնում է սերը մերձավորի հանդեպ և օրհներգում այն: Նա բարոյական արժեքներից ամենակարևորը համարում է սերը (Ա Կորնթ., 13.1-13):

Սարոյանի համար նույնպես սերը կյանքի բարձրագույն արժեքն է: Նրա հերոսները լավ գիտեն, որ սերն է միակ պաշտպանությունը փորձանքից ու դժբախտությունից: «Սիրուց ծնված ճշմարտությունից բացի ոչ մի ճշմարտություն, ոչ մի գեղեցկություն, ոչ մի արդար բան, ոչ մի դրախտ ու աստված չկա»,- ասում է Վեսլի Ջեքսո-նը (3,273)՝ շարունակելով Սարոյանի հերոսների գլխավոր դրույթը. «Սերն անմահ է և ամեն ինչ հավերժական է դարձնում, իսկ ատելությունն ամեն րոպե մահանում է» (1,481): Գրողն առանձնակի կարևորում է նաև գեղեցկության թեման: Նրա պատմությունը գերության ճամբարում տրոմբոնահարի նվագի մասին գալիս է հաս-

տատելու Դոստոևսկու այն միտքը, որ գեղեցկությունը կփրկի աշխարհը: Սուրբ Գրքով և տարբեր փիլիսոփայական ու կրոնական համակարգերով հաստատված է բարու և գեղեցիկի փոխհարաբերությունը: Գեղեցիկն անբաժան է բարուց, այն ամենը, ինչ գեղեցիկ է, բարի է: Կամ՝ այն ամենը, ինչ բարի է, գեղեցիկ է: «Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպում տրոմբոնահարի երաժշտության աստվածային գեղեցկության ազդեցության ներքո թշնամին այլևս թշնամի չէ: Սա այն դեպքն է, երբ բոլորն են միավորվում փրկելու գեղեցկությունը, երբ ճամբարում և ճամբարից դուրս չկար մեկը, որ կարողանար դիմանալ տրոմբոնից հորդող ճշմարտությանն ու գեղեցկությանը, և բոլորը համահավասար էին ճշմարտության ու գեղեցկության առաջ: «Իմ կարծիքով՝ գիտեմ, թե ինչ են սիրում բոլորը, մինչև վերջին մարդը, ով էլ նա լինի ու որ խմբին էլ պատկանի, բոլորն էլ ճշմարիտն ու գեղեցիկն են սիրում: Սիրում են ու կարիքն զգում, կարոտում են ու երազում, ու նրանց աչքերն արցունքով են լցվում, հենց որ դրան հաղորդակից են լինում» (3,308):

Վեսլի Ջեքսոնը մի առանձին թուլություն ունի Ժողովողի հանդեպ: Երիտասարդին գրավում են նրա անսահման իմաստությունը, կյանքի ունայնության և անցողիկության, մարդկային երջանկության, կյանքի և ձգտումների անհեթեթության փիլիսոփայությունը: «Ունայնություն ունայնությանց. ամեն ինչ ունայն է,- ասում է Ժողովողը,- …Ես տեսա այն բոլոր գործերը, որ կատարվել են արեգակի ներքո, և, ահա ամեն ինչ ունայնություն է և հոգու տանջանք» (Ժող., 1.2,14): Վեսլին նույնպես, կարեկցանքից ու ունայնության զգացումից տանջվելով, ծով արտասուք է թափում տիեզերքի և նրա բոլոր անհայտ գաղտնիքների, մարդու, փոքր ժողովուրդների բախտի, ամբողջ աշխարհի ու մարդկության համար:

Սակայն կյանքի ունայնության փիլիսոփայությունից զատ, երիտասարդ և կենսասեր Վեսլիին հարազատ են նաև Սողոմոն իմաստունը, «Երգ երգոցի» բանաստեղծական կիրքը կնոջ հանդեպ: ՆՐրան ոչինչ օտար չէ՝ ո՛չ տիեզերքը, ո՛չ Աստված, ո՛չ բնազդները, ոչ էլ ազնվաբարո կյանքը: «Ուրախացի՛ր, երիտասա՛րդ, քո երիտասարդությամբ, թող սիրտդ քեզ զվարճացնի քո երիտասարդ օրերին: Գընա քո սրտի անբիծ ճանապարհով և քո աչքերի տենչանքով, բայց և իմացի՛ր, որ այս բոլորի համար Աստված պիտի քեզ դատաստանի ենթարկի: Եվ քո սրտից հեռո՛ւ վանիր տրտմությունը և չարությունը… Վախեցիր Աստծուց և պահիր նրա պատվիրանները, որովհետև Աստված պիտի բոլոր արարածներին դատաստան անի նրանց կատարած բոլոր թաքուն գործերի համար՝ լինեն դրանք չար թե բարի» (Ժող., 11.9-10): Վեսլիի կյանքը և գործերը Սողոմոն Իմաստունի այս խոսքերի հաստատումն են: Նա նույնպես, ինչպես ամեն ինչ և ամեն ոք, ունի իր կյանքի ժամանակը՝ մենության և երկնքի հետ պայման կապելու, իմացության և սիրո, պատերազմի և երջանկության, աշխարհում իրեն բաժին ընկած սիրուց ու երջանկությունից շշմելու և Աստծուն փառք տալու ժամանակը, նաև՝ ցավի ու զայրույթի, տրտունջի ժամանակը, որովհետև, բարեբախտությանը դրժ-

բախտություն է խառնվում, և ոմանց, ինչպես իրեն, բաժին է ընկնում ամբողջ երջանկությունը, իսկ մյուսներին՝ ոչինչ:

Ն. Բերդյաևը չի համաձայնում այն մտքին, որ այս ստորակարգ կամ անհրաժեշտության աշխարհի հեղինակը Աստված է: «Աստված նյութական աշխարհի հետ գործ չունի և գտնվում է միայն հոգևոր աշխարհում: Անհնարին է Աստծուն ընդունել տառապանքով, ատելությամբ ու չարությամբ լեցուն այս աշխարհի տեր և կառավարիչ»[6]: «Ուր էլ դառնա մարդու հոգին, բացի քեզանից ամենուր ցավի դեմ կառնի, նույնիսկ եթե գեղեցկության հանդիպի, որ քեզանից դուրս է»,- ասում է Օգոստինոս Երանելին[7]:

Որտեղի՞ց եկավ չարը, և ինչպե՞ս սողոսկեց մարդկային աշխարհ, եթե Աստված, լինելով բարի, արարեց բարի արարածներ: Երբ Քրիստոսն ասում էր, որ չարին չարով չպետք է պատասխանել, Նա լավ գիտեր, որ մարդն անզոր է հաղթել չարին, և չարին կարող է հաղթել միայն Ինքը՝ սիրո և զոհաբերության Աստվածը, Նա, որն Իր վրա ընդունեց և Իր արյունով քավեց մարդկային մեղքերը: Թշնամու և չարի մասին ավետարանական ճշմարտությունը մարդիկ չկարողացան ճիշտ ընկալել: Սակայն միսիս Մաքոլին այս հարցում քրիստոնեական բարոյականության կրողն է: Նա ասում է. «Չար մարդուն պետք է ներել, նրան պետք է սիրել, որովհետև մեր յուրաքանչյուրից ինչ-որ բան կա աշխարհի ամենաչար մարդու մեջ, ինչպես նրանից ինչ-որ բան՝ մեր մեջ» (1,424):

«Արհամարհիր չարիքն ու անազնվությունը, բայց ոչ չար ու անազնիվ մարդկանց: Կյանքիդ ժամերն ապրիր այնպես, որ քեզ բաժին ընկած ժամերիդ չավելացնես վիշտն ու տառապանքը»,- ասում է Սարոյանը «Քո կյանքի ժամերը» թատերգությունում (2,43):

Նիքի պանդոկում կենցաղային ու սյուժետային դրվագների միջոցով ստեղծվում է ինքնատիպ փիլիսոփայական-խորհրդանշական կառույց: Հերոսները լուծում են մարդկային կեցության համընդհանուր խնդիրներ՝ ողբերգական խորությամբ: Թատերգության կենտրոնում առատաձեռնորեն իր ունեցվածքը ուրիշների հետ կիսող, ամբողջ կյանքում Աստծուն սպասող և սպասումից հոգնած Ջոն է, Թոմը, Քիթին, նավահանգստի բանվորը, Էլսին, ոստիկանը, ծերունի, իմաստուն արաբը: Ջոյին ապշեցնում է արաբի փիլիսոփայությունը ծննդի ու մահվան, աճի ու քայքայման, սկզբի ու վերջի, տիեզերքի նախասկզբի՝ ոչնչի մասին: Թատերգության հերոսները երազել են գեղեցիկ ու լուսավոր կյանք, և բոլորի երազանքները, բախվելով չարությանն ու ատելությանը, փշրվել են ու ոչնչացել՝ հերոսների կյանքից օտարելով սերն ու գեղեցկությունը: Բարի Ջոն ոչինչ չի խնայում Թոմի ու Քիթի Դյուվալի կյանքը հուսահատության ճիրաններից ազատելու, նրանց լուսավոր ապ տանելու, Քիթիին իր կողոպտված կյանքի հրաշալի մեղեդին վերադարձնելու համար: Նիքի պանդոկում հավաքված՝ բարության, մխիթարության ու կարեկցանքի, երջանկության ու սփոփանքի կարոտ մարդկանց խանգարում է

[6] **Бердяев Н.,** *նշվ. աշխ., էջ 145:*

[7] **Օգ. Երանելի,** *Խոստովանություններ, Ե., 2002, էջ 25:*

սրիկա Բլիքը: Կոպիտ և դաժան ուժի տեր՝ նա ծեծում է ծերունուն, նվաստացնում կնոջը, անարգում և ստորացնում բոլորին: Այստեղ Սարոյանը ավետարանական «չարին չարով չպատասխանելու» սկզբունքից հրաժարվում է: Նա հետևում է Հին Կտակարանի իմաստությանը և նմանվելով արդարադատ Սողոմոնին՝ կայացնում է հիրավի սողոմոնյան վճիռ. «Իսկ ամբարիշտները, որոնք արհամարհեցին արդարությունն ու ապստամբեցին Տիրոջ դեմ, պիտի կրեն իրենց պատիժը՝ իրենց խորհուրդներին համապատասխան» (Իմաստ., 3.10): Բլիքը սպանվում է, և գրողն իր այդ քայլով հաստատում է վաղեմի ճշմարտություններից և բարոյականության հին, գլխավոր բանաձևերից մեկը. «Աշխարհում ամեն ինչ չէ, որ թույլատրված է»:

Սարոյանն իր ստեղծագործություններում անդրադարձել է նաև կյանքի և մահվան հարցերին: Բազմաթիվ մեծ մարդիկ մահվան բնազդը համարել են ամենաազնիվը, մահվան մեջ տեսել դրական հատկանիշներ: Մաքոլիների ավագ որդին՝ Մարկուսը, պատրաստ է արժանապատվորեն ու խոնարհությամբ ապրել ոչ միայն իրեն բաժին ընկած կյանքը, այլև ընդունել մահը: Սարոյանի՝ ինքնազոհաբերման պատրաստ մյուս հերոսները ևս՝ Ջո Ֆոքսհոլը, Դոմինիկ Տոսկան, մահն ըմբռնում են որպես հոգևոր բարձրագույն գոյավիճակ: Մահվան հանդեպ չկա սարսափ, ընկճվածություն կամ վախ: Մահը նրանց համար վերածննդի ու անմահության սկիզբն է: Ընդրանք ոչ թե անտարբեր են մահվան նկատմամբ, այլ այն ընդունում են վեհորեն, հանգիստ, արժանապատիվ և առաքինի կեցվածքով: Հետագայում, արդեն գրեթե վաթսունամյա հասակում Սարոյանը «Կյանքի և մահվան օրեր կամ փախուստ դեպի լուսին» ստեղծագործության մեջ գրում է. «Մարդը ստեղծել է Աստծուն, երկինքը, հավիտենական կյանքի առասպելը, և մահը ժխտող բազմաթիվ այլ բաներ: Բայց գուցե նա բոլորովին էլ չի հնարել այս ամենը»(4,320):

Մեծ գրողը հաճախ է անդրադարձել նաև մարդկային կյանքի անարդարության, մարդուն բաժին ընկած տառապանքի և աշխարհի անկատարության հարցերին: Դեռ Դավիթ Սաղմոսերգուն էր մատնանշում աշխարհում գոյություն ունեցող անարդարությունը.

Ահա մեղավոր են, և սակայն բարգավաճում են նրանք…

Ասացի՝ «Իզուր ուրեմն արդար դարձրի սիրտն իմ,

և ձեռքերս սրբությամբ լվացի» (Սաղմ., 72.12-13):

Մարդու համար դժվար է հաշտվել իրեն բաժին ընկած անմիտ, սոսկալի, մարդկային հնարավորություններից դուրս տառապանքի, նաև անարդարության հետ, թե ինչու է հատկապես ինքը տառապում և ոչ թե մեկ ուրիշը: Խոսելով անմարդկային, սոսկալի տառապանքի մասին՝ Հոբ Երանելին, անիծելով իր ծնված օրը, բողոքում է տառապանքի անհեթեթության դեմ. «Փորձություն չէ՞ միթե երկրի վրա կյանքը մարդու» (Հոբ, 7.1): Անհնար է արդարացնել անհեթեթ տառապանքը, ինչպես դա փորձում էին անել Հոբին մխիթարողները: Չէ՞ որ Աստված նույնպես չընդունեց և դատապարտեց նրանց փաստարկները մեղքի ու տառապանքի մասին: Նույնիսկ Քրիստոսը, սոսկալով ուժից վեր տառապանքից, Հայր Աստծուն խնդրում էր հեռացնել Իրենից այդ բաժակը, և Խաչի վրա Նրա վեր-

ջին բառերից եղան. «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մարկ., 15-34):

Սարոյանը նույնպես չի հիանում մարդկային տառապանքով և այն չի դիտարկում որպես կյանքի բարձրագույն նպատակ: Տառապանքը արժանապատվորեն կրելը չի նշանակում սիրել այն: Չչափակշռելով մարդկային ճակատագիրը՝ Սարոյանը գտնում է միակ հնարավոր պատասխանը: «Ուղերձ չնչահավատներին» պատմվածքում նա առաջարկում է ընդունել աշխարհն այնպես, ինչպես կա. «Հավատալ արևին, լույսին, հավատալ Աստծուն՝ առանց նրան քննելու» (1,313): «Ո՞ր մարդը կարող է իմանալ Աստծո խորհուրդները…» (Իմաստ., 9.13): Չէ՞ որ Աստծո գործերը և Աստծո ծրագրերը, Նրա ճանապարհները մարդու համար երբեք բացահայտված չեն եղել, և հենց դա է կյանքն ավելի գրավիչ ու հետաքրքիր դարձնում. մարդուն է թողնվում հույսը: Իսկ «Այս գարշելի ու հրաշալի աշխարհում,- ինչպես կասեր Կամյուն,- խլուրդներն անգամ տարված են հույսով»[8]:

Տառապանքի սոսկալիությունից և մարդկային կյանքի անարդարությունից է ծնվել աշխարհի անկատարության մասին տեսակետը: «Մատյան ողբերգությունում» Նարեկացին, Հոբի նման անիծելով իր ծնված օրը, Բարձրյալին խնդրում է.

Մի՛ լիցիր ինձ երկնել, և ոչ ծնանել,
Ողբալ, և ոչ արտասուել,
Խորհել, և ոչ հառաչել,
Ամպել, և ոչ անձրևել,
Ընթանալ, և ոչ հասանել,
Ինձ ձայնել, և քեզ ոչ լսել[9]:

Մինչդեռ բանական ու կատարյալ աշխարհում այսպիսի անկատարություններ չեն կարող լինել: Խոսելով աշխարհի անկատարության մասին՝ մարդկային հոգու մեծագույն գիտակ Դոստոևսկին ասում է. «Ես Աստծո դեմ չեմ բողոքում, ես բողոքում եմ նրա ստեղծած աշխարհի դեմ»[10]: Իվան Կարամազովը խնդրում է «որպես իր տառապանքների վարձատրություն, համաշխարհային ներդաշնակության հաստատման օրը հարություն տալ իրեն»[11]: Սարոյանն աստվածամարտ չէ. նա Աստծո դեմ բացահայտ չի բողոքում, նրա հետ վեճի չի բռնվում և դատի չի նստում, նա միայն ասում է. «Ես ոչ մեկի անունը չեմ տալիս, բայց ինչ-որ մի տեղ ինչ-որ բան սխալ է» (2,42): Սարոյանը համոզված է, որ աշխարհը պիտի ավելի լավը լինի, մարդիկ պետք է ավելի լավը լինեն, և աշխարհի գործերը չպետք է ընթանան այնպես, ինչպես ընթանում են:

Մեծ գրողը վստահ է, որ այս աշխարհում մարդուն մխիթարություն չկա և Հիսուսի խոսքերով երանի է տալիս բոլոր զրկվածներին, սգավորներին, հեզերին, ողորմածներին, որովհետև նրանցն է

---

[8] **Կաֆկա Ֆ.,** *նշվ. աշխ., էջ 222:*

[9] **Գրիգոր Նարեկացի,** *Մատեան ողբերգութեան, Ե., 1970, էջ 22, բան Բ, Բ. 85:*

[10] **Достоевский Ф.** *Собрание сочинений, т. 11, М., 1982, с. 289.*

[11] *Նույն տեղում:*

երկնի արքայությունը, որովհետև նրանք են մխիթարվելու, ողորմություն գտնելու և, ամենակարևորը՝ տեսնելու Աստծուն: Միստր Գրոնգանն ասում է. «Ոչ մեկը իզուր չի մեռնում: Կգա օրը, երբ բոլոր մարդիկ, մենք բոլորս, մեզանից ամենահետիններն անգամ, կրհասնեն վերջնական օթևանի, կհանգստանան, կսփոփվեն, կհասնեն անմահության»(1,391):

Այսպիսով, մարդու փրկության ուղին տանում է դեպի Աստված: Այդ փրկությանը մասնակցողներից մեկը Վիլյամ Սարոյանն է՝ իր խղճի ու բարության դասերով, իր մաքուր, մարդու հոգին ու միտքը չպղտորող, նրան հույս ու մխիթարություն բերող խոսքով:

БИБЛЕЙСКИЕ ИСТОКИ ПРОИЗВЕДЕНИЙ В. САРОЯНА

ТОНОЯН С. Г.

Резюме

Библия оказала огромное влияние на творчество В. Сарояна. Великий писатель высоко ценил и постулировал библейские истины, осуждая зло, насилие, ненависть и нравственный упадок личности. Возводя во главу угла любовь, сострадание, доброту как стержень человеческих отношений, Сароян своим творчеством утверждает морально-этические нормы человеческого общежития. Герои Сарояна – это униженные, обездоленные люди, нуждающиеся в поддержке и утешении. Создавая образы этих честных и правдивых людей, писатель подчеркивает их душевную красоту, стойкость и способность к самопожертвованию во имя ближнего. В. Сароян пытается, подобно пророку, донести до людей мудрость и незыблемость христианских постулатов.